

11. **Harut'yunyan Ē.**, Azgayin ink'nut'yun. "serundneri ashkharh" yev "zhamanakakits'neri ashkharh", "Banber Yerevani hamalsarani. P'ilisop'ayut'yun, hodgebanut'yun", Yer., 2019, N 2 (29) (In Armenian).

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Երեմիա Տեկանց (Տեր-Սարգսեանց), Տոհմային
յիշատակարան, գիրք Ը. (1868-1872 թթ.),
աշխատասիրությամբ՝ Հ. Ղ. Մուրադյանի, Եր.,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2018, XIX + 440 էջ***

Բանալի բառեր - Երեմիա Տեկանց, Խրիմյան, հիշատակարան, տեղեկագիրք, հարստահարություն, Հայկական հարց, հոգևորական, Ազգային ժողով, ուղեգրություն, աղբյուր:

19-րդ դարի երկրորդ կեսն Օսմանյան կայսրության պատմության մեջ հայտնի է որպես բարեփոխումների՝ թանգիմաթի դարաշրջան՝ իր երկու շրջափուլերով՝ 1839-1856 և 1856-1876 թթ.:

Առաջնորդվելով բարենորոգումների «Հաթթ-ը շերիֆ» (1839 թ.) և «Հաթթ-ը հյումայուն» (1856 թ.) հրովարտակներով Բարձր Դուռը կայսրության ոչ մահմեդական հայկական, հունական և հրեական միլիթներին, հանձնարարում է կազմել համայնքի կանոնադրություն, ինչն էլ իրականացնում է արդեն սահմանադրական շարժման ծիրի մեջ մտած պոլսահայ մտավորականությունը՝ հեղինակելով արևմտահայերի Ազգային սահմանադրությունը: Այս փաստաթղթով պետք է իրավականորեն կարգավորվեր կայսրության ողջ հայ ազգաբնակչության ներքին կրթական-յուսավորական ու մշակութային կյանքը:

Սահմանադրությունը գավառներում կիրառելու և արևմտահայության խնդիրներին, մասնավորապես հարստահարություններին ու կեղեքումներին վերջ դնելու համար անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելը դառնում է 1869 թ. պատրիարք ընտրված Մկրտիչ Խրիմյանի առաջին գործերից մեկը: Այդ նպատակով Կ. Պոլսի Ազգային ժողովը պատրաստում և 1872 թ. ապրիլն Բ. Դանն է ներկայացնում հսկայական փաստական նյութի հիման վրա պատրաստված մի ընդարձակ տեղեկագիր: Եվ թեպետ ստեղծվեց հատուկ հանձնաժողով՝ բաղկացած հայ և թուրք անդամներից, տեղեկագրում նշված փաստերը քննելու և հա-

* Ընդունվել է տպագրության 18.05.2020:

մապատասխան միջոցներ ձեռնարկելու համար, սակայն դրանք երբեք չիրագործվեցին:

Արևմտահայության հարստահարությունների խնդրի և Կ. Պոլսի Ազգային ժողովի կազմած ու Բ. Դռանը ներկայացրած առաջին տեղեկագրի վերաբերյալ մի բացառիկ սկզբնաղբուր է 2018 թ. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող **Հակոբ Մուրադյանի** աշխատասիրությամբ լույս տեսած Երեմիա Տեկանցի (Տեր-Սարգսյանց) «Տոհմային յիշատակարանի» ութերորդ հատորը¹: Այն եկել է լրացնելու սահմանադրական շարժման, արևմտահայության ներսում տեղի ունեցող խմորումների, Կ. Պոլսի ու գավառների հայության փոխհարաբերությունների, Արևմտյան Հայաստանի գավառների վիճակի և ի վերջո՝ Հայկական հարցի վերաբերյալ առկա պատկառելի գրականության ու շրջանառության մեջ դրված նոր սկզբնաղբյուրների, արխիվային նյութերի և փաստաթղթերի շարքը:

Այս արժեքավոր սկզբնաղբյուրը հուշագրության ժանրի լավագույն օրինակներից է, որն ընդգրկում է հայոց պատմության մի կարևոր ժամանակահատված՝ 1868-1872 թվականները, և շարադրված է դեպքերի ու իրադարձությունների ականատեսի ու մասնակցի կողմից: Մատենադարանում պահվող այս անտիպ աշխատությունը հրատարակվում է առաջին անգամ, ընդ որում՝ մեկ ձեռագրի հիման վրա, առանց կրճատումների, խմբագրական նվազագույն միջամտությամբ, ինչը հնարավորություն է տալիս առանց մտքի աղավաղումների ծանոթանալու և օգտագործելու այն:

Երեմիա Տեկանցը (1825-1885) ժամանակին ակտիվ գործունեություն ծավալած հոգևորականներից էր, Մկրտիչ Խրիմյանի «կարգակից» եղբայրը, ով թողել է նաև ծավալուն ձեռագիր ժառանգություն և երկու անուն տպագիր գիրք: Բազմիցս ճանապարհորդել է Արևմտյան Հայաստանում, շարադրել է արժեքավոր նոթեր, որոնցում աշխարհագրական և ազգագրական ուշագրավ տվյալներ կան իր հայրենի Վասպուրականի, ինչպես նաև Մուշի, Բիթլիսի, Բայազետի, Բասենի, Կարսի, Էրզրումի և Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի այլ վայրերի վերաբերյալ: Նրա աշխատությունը բաղկացած է առաջաբանից, թվագրված 71 գլուխներից, բառարանից և անձնանունների ու տեղանունների ցանկերից:

Երեմիա Տեկանցի հուշագրության գլուխներից յուրաքանչյուրը գուտ անձնական հուշ չէ, «...այլ ժամանակակից բազում անցից և պատմութեանց...»² շարադրանք: Դրանք ընդգրկում են 1868 թ. հոկտեմբերից 1872 թ. հունիսն ընկած ժամանակահատվածում հեղինակի ճամփորդությունների նկարագրությունը՝ հաղորդելով արժեքավոր տեղեկություններ իր պաշտոնավարության, այցե-

1 Տե՛ս Երեմիա Տեկանց (Տեր-Սարգսյանց), Տոհմային յիշատակարան, գիրք Ը. (1868-1872 թթ.), աշխատասիրությամբ՝ Հ. Ղ. Մուրադյանի, Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2018:

2 Նույն տեղում, էջ 2:

լած վայրերի, դեպքերի և իրադարձությունների, իր հետ հանդիպած, ինչպես նաև գործակցած անձանց մասին: Հեղինակն անդրադառնում է հայ-քրդական հարաբերություններին և այդ ուղղությամբ կառավարության վարած քաղաքականությանը, ինչպես նաև հայության հարաբերություններին օսմանյան կառավարող շրջանակների հետ: Մեծ տեղ է տրված Մկրտիչ Խրիմյանի գործունեության ինչպես տարոնյան, այնպես էլ պատրիարքության շրջանին:

Երկում պահպանված է դեպքերի ճշգրիտ ժամանակագրությունը, ինչպես նաև նշված են օգտագործված աղբյուրները, որոնց մեջ հատկապես մեծ արժեք ունեն թղթակցությունները՝ նամակներ, հեռագրեր և այլն:

Հուշագրության առաջաբանում Երեմիա Տեկանցը հակիրճ ներկայացնում է գրքի բովանդակությունը, ապա՝ հաջորդաբար գլուխներից յուրաքանչյուրում անդրադառնում իր ուղևորություններին և գործունեությանը:

Հեղինակի ճամփորդությունը սկսվում է Արևելյան Հայաստանից՝ Էջմիածնից, ուր 1866 թ. Մկրտիչ Խրիմյանի հետ գնացել էր եպիսկոպոս ձեռնադրվելու համար³: Այնուհետև եղել է Ալեքսանդրապոլում, Շիրակավանում, Ղզլքիլիսայում, Անիում, Կարսում, Հասան-Կալայում, Կարինում, Մուշում, Բալուում, Խարբերդում, Սեբաստիայում, Ամասիայում, Սամսոնում և ճամփորդությունն ավարտել Կ. Պոլսում, որտեղ նրան վստահվել են մի շարք կարևոր պաշտոններ:

Գրախոսվող աշխատության ամենաարժեքավոր մասը թերևս կարելի է համարել «Տեղեկագիրք գաւառական հարստահարութեանց»⁴-ը, որը նախապատրաստվել էր «Հայաստանի հարստահարութեանց քննիչ յանձնաժողովի» կողմից 10 ամսվա տքնաջան աշխատանքից հետո: Ինչպես հայտնի է, այս բացառիկ փաստաթուղթը բաղկացած էր 2 մասից՝ «Քննութիւն գաւառացի ազգայնոց վիճակին»⁵ և «Դարման գաւառացի ազգայնոց վիճակին»⁶: Առաջին մասում նշված էին այն կետերը, որոնք դարձել էին արևմտահայության՝ շուրջ 20 տարվա ընթացքում կուտակված բողոքների առիթ՝ անկանոնություններն արքունի տուրքերի հավաքման գործընթացում, պաշտոնյաների կատարած զեղծումները, քրիստոնյաների վկայության չընդունվելը դատարաններում և մասնավոր, անհատական հարստահարությունների բազմաթիվ դեպքերը:

Երկրորդ մասում՝ «դարմանների» մեջ, ներկայացված էին փաստաթուղթը կազմողների դիտողություններն ու առաջարկությունները: Ուշագրավ է առաջին առաջարկը, այն է՝ ««Չինուորական տրոց» փոխարեն մարդ, այսինքն՝ զինուոր տալ բարեկարգութեանց հրովարտակին համեմատ»⁷, որը վիճաբանությունների առարկա էր դարձել: Հակառակ Ազգային ժողովի ատենապետ Գրի-

3 Տես նույն տեղում, էջ 5:
 4 Նույն տեղում, էջ 289-306:
 5 Նույն տեղում, էջ 288:
 6 Նույն տեղում, էջ 301:
 7 Նույն տեղում, էջ 302:

գոր Օտյանի փորձերին՝ բացատրելու «բեղել-ի ասքերիեի»՝ զինվորական տուրքի⁸ բացասական բովանդակությունը, ինչպես նաև պատրիարք Խրիմյանի եզրափակիչ ամփոփմանն առ այն, որ հարստահարություններն արդյունք են թուրքական պետության քաղաքական կյանքում տարբեր ազգերի ու ժողովուրդների գրաված տարբեր տեղերի, և միայն քրիստոնյաների՝ զենք կրելը կարող է փոխել քրդերի ու թուրքերի վերաբերմունքը նրանց նկատմամբ՝ ստիպելով դիտել նրանց որպես իրենց հավասար, այնուամենայնիվ, առաջարկը չի ընդգրկվում տեղեկագրքի վերջնական՝ Բ. Դռանը ներկայացված տարբերակում⁹: Այս պահանջը, որն ամրագրված էր «Հայթ-ը հյումայուն»-ի մեջ, բարձրացվեց նաև 1876 թ. Սահմանադրության հռչակումից հետո, որն առաջ բերեց անհանգստություն օսմանահպատակ քրիստոնյաների շրջանում, լուրջ քննարկումների առարկա դարձավ Հայոց Ազգային ժողովում և ի վերջո մերժվեց երեսփոխանների կողմից:

Առաջարկվող մյուս միջոցները հետևյալն էին՝ տուրքերի հավաքումը պետությունը պետք է ինքն իրականացնի, ոչ թե մյուլթեզիմը՝ հարկահավաքը¹⁰, գավառներ պետք է ուղարկվեն տեղական կառավարիչներից անկախ լիազոր քննիչներ, որոնք կկարողանան իրապես քննել դրությունը¹¹, քրդերի և այլ լեռնցի ցեղերի ձեռքից պետք է վերցնել զենքերը կամ էլ մյուս ժողովուրդների ձեռքն էլ զենք տալ¹² և այլն:

Երեմիա Տեկանցը ներկայացնում է ինչպես տեղեկագրի նախապատրաստման ամբողջ շրջանը, այնպես էլ դրան նախորդած և հաջորդող իրադարձությունները՝ որպես այդ ամենի գլխավոր մասնակից: Նա ընդգրկված է եղել 1870 թ. պատրիարք Խրիմյանի նախաձեռնությամբ Հայոց Ազգային ժողովի կողմից կազմված հանձնաժողովի կազմում, որը բաղկացած էր 4 հոգևորականից և 6 (ապա 5) աշխարհականից¹³: Այդ հանձնաժողովը պետք է «գաւառաց մէջ գործուած զեղծմանց և հարստահարութեանց ներքին և արտաքին պատճառներ քննէ, պէտք եղած տեղեկութիւններն ստանալով՝ ի հարկին ազգային դիւանատունէն անոնց բարձման համար դարման մտածէ և իր քննութեանց և խորհրդածութեանց արդիւնքն տեղեկագրով մը հաղորդէ Ընդհանուր ժողովոյն»¹⁴: Ուստի գավառաբնակ հայության հարստահարությունների մասին բարձրաձայնելն ու դրանց վերացման համար լուծումներ առաջադրելը դարձել էր հեղինակի կյանքի գործը¹⁵:

8 Օսմանյան կայսրությունում զենք կրելու իրավունք ունեին միայն իսլամադավանները, իսկ քրիստոնյաները ազատված էին այդ պարտականությունից և փոխարենը վճարում էին զինվորական տուրք:

9 Տե՛ս Երեմիա Տեկանց (Տեր-Սարգսեանց), նշվ. աշխ., էջ 315-321:

10 Տե՛ս նույն տեղում, էջ 302:

11 Տե՛ս նույն տեղում, էջ 303:

12 Տե՛ս նույն տեղում, էջ 304:

13 Տեղեկագիրը չի ստորագրել Մատթեոս Էֆենդի Այվատյանը:

14 Երեմիա Տեկանց (Տեր-Սարգսեանց), նշվ. աշխ., էջ 278:

15 Տե՛ս նույն տեղում, էջ 204

1871 թ. հոկտեմբերին հանձնաժողովի պատրաստած տեղեկագիրը ներկայացվում է Ազգային ժողովի նիստին¹⁶: Քննարկման մասնակիցների մի մասը դժգոհություն է հայտնում գեկուցագրի երկրորդ մասում առաջարկված լուծումների առնչությամբ, ուստի այն հանձնվում է Քաղաքական ժողովին՝ վերանայելու համար¹⁷: 1872 թ. փետրվարի 18-ին փոփոխություններից և կրճատումներից հետո «սրբագրեցին զայն երեսփոխանք և ահա պատճեն սրբագրեալ տեղեկագրոյն», որը հաստատվում է, թարգմանվում թուրքերեն¹⁸, 1872 թ. ապրիլին ներկայացվում Բ. Դռանը:

Գավառաբնակ հայության կյանքում դրանից հետո էլ որևէ դրական փոփոխություն տեղի չունեցավ, ընդհակառակը՝ ավելի սաստկացան հարստահարությունները քրդական ցեղապետերի և թուրք պաշտոնյաների կողմից: Այդ մասին էր վկայում 1876 թ. Կ. Պոլսում առանձին գրքույկով հրատարակված երկրորդ տեղեկագիրը, որն առաջինի համեմատ ավելի ծավալուն էր և ներառում էր 1872 թվականից հետո պատրիարքարանի կողմից Բ. Դռանն ուղղված բազմաթիվ թաքրիրները՝ բողոքագրերը:

1872 թ. փաստաթղթի գոյությունը, ինչպես և այն կառավարությանը ներկայացնելը, արդեն բացառիկ երևույթ էր, քանի որ առաջին անգամ էր Հայոց Ազգային ժողովում քննվում արևմտահայության հարստահարությունների հարցը, և առաջին անգամ էր, որ ժողովն օգտվում էր բողոքելու իր սահմանադրական իրավունքից և բարձրաձայնում արևմտահայության հարստահարությունների մասին: Ձևակերպվում է արևմտահայության ազատագրության խնդիրը, որը, 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո քննարկվելով և արժարժվելով դիվանագիտական հարաբերություններում, թևակոխում է միջազգայնացման փուլ՝ որպես Հայկական հարց՝ դադարելով ներքին խնդիր լինելուց:

Ուշագրավ է տեղեկագրին Երեմիա Տևկանցի տված դիպուկ գնահատականը. «Խնդիրն հարստահարութեանց սերմանեցաւ ի սիրտ ազգասիրաց, որպէս զսերմ հատոյ մանանխոյ, որ փոքրագոյն է, քան զամենայն սերմանիս երկրի, սակայն իբրեւ բուսաւ, աճեցաւ, ծնաւ զՀայկական խնդիրն, տարածեցաւ, լայնացաւ և պտղաբերեաց զ16-րդ յօդուածն Այիստեֆանէի և 61-րդ յօդուածն Պերլինի»¹⁹:

Հ. Մուրադյանի շանքերով տպագրված Երեմիա Տևկանցի աշխատության մեջ պահպանված են արևմտահայերեն ձեռագրի ուղղագրությունը և բառապաշարը, շտկված են կետադրությունը, վրիպակներն ու կրճատ ձևերը, ինչն ավելի մատչելի է դարձնում ընթերցանությունը: Տեքստը հագեցած է ծանոթագրություններով ու հղումներով: Գործնական կարևոր նշանակություն ունի հայերեն և օտար ծագում ունեցող բառերի ու եզրույթների, հարկային, սոցիա-

16 Տե՛ս նույն տեղում, էջ 307:

17 Տե՛ս նույն տեղում, էջ 311:

18 Տե՛ս նույն տեղում, էջ 321:

19 Նույն տեղում, էջ 321:

լական, վարչական և այլ տերմինների համար կազմված բառարանը: Կցված են տեղանունների և անձնանունների ցանկեր:

Աշխատության մեջ տեղ-տեղ հանդիպում են որոշ բացթողումներ և վրիպակներ: Օրինակ, էջ V-ում խոսելով «Հայաստանի հարստահարութեանց քննիչ յանձնաժողովի» մասին, Հ. Մուրադյանը նշում է, որ այն բաղկացած էր 4 հոգուց, այնինչ բնագրում՝ էջ 278, նշվում է 10 անդամների ընտրության մասին: Համապատասխան պարզաբանում չի տրվում նաև, թե ինչու են բացակայում 71 անուն գլխից 3-ը, որոնք բնագրի բովանդակության մեջ առկա են:

Անվոփեղով վերը շարադրվածը՝ պետք է նշել, որ Հակոբ Մուրադյանի աշխատասիրությամբ գիտական շրջանառության մեջ դրված Երեմիա Տևկանցի «Տոհմային յիշատակարանը» բացառիկ սկզբնաղբյուր է 19-րդ դարի 60-70-ական թթ. հայոց պատմության վերաբերյալ, որը շարադրված է ժամանակի գրագետ և բանիմաց աստվածաբան հոգևորականներից մեկի կողմից: Պատմագիտական մեծ արժեք ունենալուց զատ՝ այն նաև կարևոր սկզբնաղբյուր է Արևմտյան Հայաստանի պատմական ժողովրդագրության, ազգագրության, առօրեականության, կրոնական, ներեկեղեցական և միջեկեղեցական հարաբերությունների, ինչպես նաև առանձին թեմերի պատմության ուսումնասիրության համար:

Կարոլինա Մ. Սահակյան

Կարոլինա Մ. Սահակյան - գրադվում է Օսմանյան կայսրության ուշ շրջանի պատմության հարցերով, ունի 4 տպագրված գիտական հոդված: Հետաքրքրությունների շրջանակում են Օսմանյան կայսրության ազգային փոքրամասնությունների պատմությունը, Հայկական հարցը, ինչպես նաև օսմանյան և ժամանակակից թուրքական գրականությունը:

Էլեկտրոնային հասցե՝ csahakyan@gmail.com

Summary

**Yeremia Tevkants (Ter-Sargsyants), Family Chronicle, book 8 (1868-1872),
With the diligence of H. Gh. Muradyan, NAS RA Institute of History,
Yerevan, 2018, 440 p.**

Karolina M. Sahakyan

Key words - Tevkants, Khrimyan, chronicle, newsletter, sufferings, Armenian Question, clergy, National Assembly, travel book, source.

In the given review we refer to the eighth volume of the “Family Chronicle” by Yeremia Tevkants (Ter-Sargsyants), published by the Institute of History of the NAS RA in 2018, with the elaboration of senior researcher Hakob Muradyan. This is one of the best examples of the genre of memoirs and includes the 1868-1872 history of a long period of Armenian history, written by one of the most literate and knowledgeable theologians of the time, who was the witness and participant of the events and happenings described.

This work consists of an introduction, 71 chapters, a vocabulary and an index of personal names and toponyms. In each of the chapters, the author discusses his travels and activities, providing exclusive information about the places he visited, the people he met and the people he worked with.

The exact chronology of the events is preserved in the work, as well as the sources used, in which correspondence, such as letters, telegrams, etc., is of particular value.

The most valuable part of the reviewed work, perhaps, can be considered the “Bulletin of Provincial Oppressions”, which was prepared by the “Commission of Inquiry into the Oppressions of Armenia” in 1892 and submitted to the Sublime Porte. It was the first time that the National Assembly of Constantinople exercised its constitutional right to formally apply to the government to end the illegalities and atrocities committed in Western Armenia. This document, prepared on the factual basis of numerous petitions received from the cantons by the Patriarchate for about 20 years, formulated the issue of the Western Armenians, which became the Armenian Question and after the 1877-1878 Russian-Turkish war, it entered the phase of internationalization, becoming the subject of diplomatic relations and discussions.

“Family Chronicle” by Yeremia Tevkants put into scientific circulation by the efforts of Hakob Muradyan, besides being of great historical value is also an important source of demographics, ethnography, everyday life, religious, intra-church and inter-church relations, as well as from the perspective of the study of the history of separate dioceses.

Резюме

Еремия Тевканц (Тер-Саргсянц), «Родовая летопись», книга 8 (1868-1872), сост. А. Г. Мурадян, Институт Истории НАН РА, Ер., 2018, 440 с.

Каролина М. Саакян

ՀՀ-ի համահայկական հանրելու, ժԲ (ԺԸ) Գարրի. թիվ 2 (70), ամիլի-հուներ, 2020

Ключевые слова - Тевканц, Хримян, летопись, бюллетень, страдания, Армянский вопрос, духовенство, Национальное собрание, книга путешествий, источник.

В рецензии рассмотрен восьмой том «Родовой летописи» Еремии Тевканца (Тер-Саргсянц), изданный Институтом истории НАН РА в 2018 г. с предисловием и примечаниями старшего научного сотрудника Акопа Мурадяна. Этот ценный труд, написанный одним из самых грамотных и сведущих богословов того времени, является ценнейшим источником по истории Западной Армении и константинопольских армян с 1868 по 1872 гг.

Работа состоит из предисловия, 71 главы, словаря, указателей личных имен и географических названий. Автор подробно рассказывает о тех местах, в которых он побывал, о людях, с которыми встречался или сотрудничал, об отношениях между армянами в Константинополе и Западной Армении, об армяно-курдских отношениях и о многом другом.

Однако самой важной частью этого труда, на наш взгляд, являются «Ведомости угнетений в провинциях». Этот документ был составлен Национальным собранием западных армян и предоставлен Высокой порте в 1872 г. «Ведомости...» состоят из двух частей. В первой части на основе богатого фактического материала по пунктам упоминаются все случаи жалоб армян. Во второй части делаются предложения по поводу мер, которые должны предприниматься правительством для улучшения положения армян и решения их проблем.

И хотя «Ведомости...» ничего не изменили в положении армян в Османской империи, сам документ был ценен тем, что впервые армяне воспользовались своим конституционным правом и заявили об угнетении. Этот документ был началом формирования Армянского вопроса, который уже после русско-турецкой войны 1877-1878 гг. перестал быть внутренней проблемой Османской империи и стал частью проблем международной дипломатии.

Эта летопись, помимо того, что имеет большую историографическую ценность, также является важным источником как по демографии, этнографии, повседневности, религиозным и межцерковным отношениям, так и для изучения истории отдельных епархий Армянской церкви.

REFERENCE

1. Yereimia Tewkants' (Ter-Sargseants'), Tohmayin yishatakararan, girk' Ę. (1868-1872 t't'), Yer., HH GAA patmut'yan institut, 2018 (In Armenian).